

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի
կողմից
12 դեկտեմբեր 2016թ., թիվ N 39-Ա որոշում

ԿԱՐԳ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ

ԵՐԵՎԱՆ
2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
I. Վիճակագրական սկզբնական տվյալների հավաքագրման մեթոդները	4
II. Գների դիտարկման համար բազային կազմակերպությունների ընտրության կարգը	5
III. Սպառողական ապրանքների գների և մատուցված ծառայությունների սակագների արձանագրումը	6
IV. ՄԳԻ-ի դասակարգումը	8
V. Տվյալների հավաքագրման ժամանակացույցը	9
VI. Որոշ ապրանքների (ծառայության) տեսակների գների (սակագների) դիտարկման առանձնահատկությունները	11
VII. Գների դիտարկման համար ապրանքատեսակների ընտրությունը	13
VIII. Ապրանքի (ծառայության) միջին գների (սակագների) հաշվարկը	15
<i>Հավելված 1</i> Ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնց գները(սակագները) դիտարկվում են կենտրոնացված՝ ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից	15
<i>Հավելված 2</i> ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի ՄԳԻ-ի կազմման համար պատասխանատու տնտեսագետ-մասնագետների գործառույթները	17
<i>Հավելված 3</i> Գին դիտարկող մասնագետների գործառույթները	18

Նախաբան

Սույն կարգով որոշվում և բնութագրվում է Հայաստանի Հանրապետությունում Սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ) համար ընտրանքային կարգով ընտրված սպառողական շուկայում սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման գործընթացը:

Սպառողական գների դիտարկումներն և ինդեքսի հաշվարկներն իրականացվում են ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների տարեկան և եռամյա ծրագրերին համապատասխան:

Ինչպես յուրաքանչյուր վիճակագրական հետազոտություն, գների վիճակագրությունը հիմնվում է 3 շարունակական գործընթացների՝ վիճակագրական տվյալների հավաքագրման, դրանց խմբավորման, ամփոփման, ինչպես նաև ամփոփված տվյալների վերլուծության և հաշվարկման վրա:

Այս կարգով չափորոշվում և պարզաբանվում է առաջին գործընթացը:

Սույն կարգը մշակված է հաշվի առնելով միջազգային փորձը, առաջարկվող առաջադեմ մեթոդները, ինչպես նաև Եվրոպական «ԹՎինինգ» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում եվրոպական փորձագետների առաջարկությունները, երաշխավորությունները, խորհրդատվությունները:

I. Վիճակագրական սկզբնական տվյալների հավաքագրման մեթոդները

Վիճակագրական սկզբնական տվյալների գնային տեղեկատվության հավաքագրումը կարող է իրականացվել անմիջական դիտարկումների միջոցով, կիրառելով նախօրոք մշակված հարցաթերթերի լրացման և կենտրոնացված հավաքագրման մեթոդները:

ՀՀ Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար ապրանքների (ծառայությունների) գների (սակագների) վիճակագրական դիտարկման համար օգտագործվում է գնադիտարկող մասնագետների կողմից գների անմիջական դիտարկման մեթոդը, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից գնային տվյալների կենտրոնացված հավաքագրումը:

Որոշ դեպքերում իրականացվում է նաև նախօրոք մշակված հարցաթերթերի լրացման միջոցով գնային տվյալների հավաքագրումը (օրինակ՝ բուժօգնություններից գործող սակագների մասին տվյալները):

Գների անմիջական դիտարկումներն իրականացվում են գնադիտարկող մասնագետների (վիճակագրերի) կողմից անմիջական այցելությամբ դիտարկման համար ընտրված համապատասխան առևտրի (ծառայության) օբյեկտներ և արձանագրվում են գնապիտակների կամ գնացուցակների վրա տպագրված գները: Դիտարկման բազային օբյեկտներում վիճակագրերը գների արձանագրման համար կարող են կատարել որոշակի գործողություններ (զանազան չափումներ, կշռումներ և այլն) մեկ միավոր գնի ճիշտ որոշման և գրանցման համար:

Դիտարկված գներն արձանագրվում են գների դիտարկման համար կազմված ձևի լրացման միջոցով:

Որոշ ծառայությունների սակագների հավաքագրումը, որոնք հաստատագրված են ամբողջ հանրապետության համար, ինչպիսիք են օրինակ հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազի և այլ ծառայությունների սակագները, իրականացվում է կենտրոնացված կարգով՝ ՍԳԻ-ի հաշվարկի համար պատասխանատու վերը նշված ՀՀ ԱՎԾ-ի բաժնում:

Գնային տվյալների հավաքագրումը՝ նախօրոք մշակված հարցաթերթերի միջոցով, իրականացվում է դիտարկվող առևտրի կամ ծառայության օբյեկտի (կազմակերպության) կողմից ինքնուրույնաբար՝ լրացված հարցաթերթերի ժամանակացույցին համապատասխան ներկայացմամբ:

II. Գների դիտարկման համար բազային կազմակերպությունների ընտրության կարգը

Գների արձանագրումն իրականացվում է նախօրոք ընտրված առևտրի (ծառայության) կետերում՝ այսպես կոչված *բազային կազմակերպություններում*:

ՍԳԻ-ի հաշվարկման համար բազային առևտրի (ծառայության) օբյեկտների ընտրության իրավունքը վերապահված է գին գրանցող-վիճակագրերին: Բազային օբյեկտներն ընտրվում են հաշվի առնելով դրանց ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը տվյալ տարածաշրջանի առևտրի և ծառայության ոլորտում, ինչպես նաև դրանց մատչելիությունը, ապրանքների և ծառայությունների անհրաժեշտ տեսականու առկայությունը համեմատաբար երկար ժամանակահատվածում, դրանց սփռվածությունը տվյալ բնակավայրի տարածքում և այլն: Միևնույն ժամանակ կարևորվում է խոշոր առևտրի կետերի՝ օրինակ սուպերմարկետների տարածված ցանցերի ընդգրկումը բազային օբյեկտների կազմում: Դիտարկման մեջ ներգրավվում են նաև համեմատաբար փոքր առևտրի և ծառայության կետերը, որոնք հասանելի են տվյալ տարածքի բնակչության լայն զանգվածների համար: Ընտրանքն իրականացվում է նաև սպառման համար մի քանի այլ հանգամանքներից ելնելով (օրինակ՝ հաշվի առնելով ապրանքի գնի մատչելիությունն, անհրաժեշտ տեսականու առկայությունը և այլն):

Առևտրի (ծառայության) կետերն անփոփոխ են մնում այնքան ժամանակ, մինչև դրանք չեն դադարեցնում իրենց գործունեությունը կամ չեն կորցնում իրենց ներկայացուցչականությունը և գրավչությունը բնակչության համար, կամ էլ չեն ենթարկվում վերակազմավորման՝ փոխելով իրենց գործունեության ուղղվածությունը: Այդպիսի դեպքերում, դրանց փոփոխությունը իրականացվում է գին դիտարկող մասնագետի կողմից՝ տեղեկացնելով և խորհրդակցելով ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության

և միջազգային համադրումների բաժնի համապատասխան մասնագետների հետ:

Յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) տեսակի համար գների դիտարկման նպատակով ընտրվում է 3-ից 12 առևտրի ծառայության բազային կետ, հաշվի առնելով տվյալ մարզում դիտարկվող բնակավայրի բնակչության թվաքանակի, առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալների մասին ցուցանիշները:

III. Սպառողական ապրանքների գների և մատուցված ծառայությունների սակագների արձանագրումը

Որպես գին արձանագրման է ենթակա սպառողական շուկայի վաճառքում առկա ապրանքի *փաստացի գինը*, ինչը վճարվում է կանխիկ դրամով: Ծառայության համար արձանագրման է ենթակա ծառայության առանձին տեսակի *փաստացի գինը* (սակագինը), որը մատուցվել է բնակչությանը և վճարվել է դրա դիմաց կանխիկ դրամով:

Սպառողական գինը (սակագինը), որը հանդիսանում է վաճառքի վերջնական գին, ներառում է ԱԱՀ, ակցիզային, վաճառքի և այլ տեսակի հարկերը և տուրքերը:

ՍԳԻ-ի հաշվարկման համար գների (սակագների) դիտարկման նպատակով ապրանք (ծառայություն) – ներկայացուցիչների ընտրանքն իրականացվում է՝

✓ հիմնվելով տնային տնտեսությունների կենսապայմանների ինտեգրացված հետազոտության արդյունքների վրա, ընտրվում են առավելագույն սպառում ունեցող ապրանքների և բնակչությանը մատուցված ծառայությունների տեսակները,

✓ գին դիտարկող մասնագետի կողմից պարբերաբար իրականացվող առևտրային և բնակչության սպասարկման կետերի ուսումնասիրությունների հիման վրա,

✓ փորձագետների հարցումների պատասխանների և առաջարկների հիման վրա:

ՍԳԻ-ի գամբյուղի կազմում նախօրոք ընտրված յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) տեսականու համար գների դիտարկմանը զուգահեռաբար անհրաժեշտ է նշել ապրանքատեսակի անվանումը, ինչպես նաև ապրանքի (ծառայության) համառոտ բնութագիրը ներկայացնող տեղեկատվություն:

Տեղեկատվությունը պետք է լինի հակիրճ, սակայն հնարավոր լինի հաջորդ գնադիտարկման ժամանակ, ինչպես նաև գնադիտարկողի փոփոխվելու դեպքերում

տարբերակել ընտրված ապրանք-ծառայության տեսակը:

Ապրանքի տեսականու համար պետք է նշվի մոդելի, ապրանքի գույնի, քաշի, արտադրող երկրի, չափսի, որակի և այլ որակական հատկանիշների մասին տեղեկատվություն, ինչով հնարավոր է տարբերել նշված ապրանքատեսակը մեկ այլ նմանատիպ ապրանքատեսակից:

Առկա ապրանքատեսակի փաստացի փաթեթավորմամբ և քաշով ձևավորված գինը վերահաշվարկվում է պահանջվող անհրաժեշտ չափի միավորին համապատասխան գնի:

Գների սակագների դիտարկման ժամանակ արձանագրված կտրուկ, աննախադեպ գների փոփոխությունների դեպքում, գին դիտարկող մասնագետը՝ հնարավորության դեպքում, պարզում է դրանց պատճառները տվյալ առևտրի ծառայության կետի վաճառքի մասնագետների հետ և բոլոր դեպքերում պարտավոր է տեղեկացնել դրանց մասին ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակի համապատասխան մասնագետներին:

Գին դիտարկող վիճակագիրը հստակ պետք է համոզված լինի, որ գնի փոփոխությունը տեղի չի ունեցել դիտարկվող ապրանքի (ծառայության) տեսակի որակական հատկանիշների փոփոխության արդյունքում, իսկ դրա առկայության դեպքում պետք է կարողանա գնահատել որակական փոփոխությամբ պայմանավորված գնի փոփոխության մեծությունը կամ դրանց գնահատման համար ներկայացնի համապատասխան տվյալներ ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին:

Առևտրի (ծառայության) կետերում դիտարկված գների և սակագների մասին տեղեկատվությունն արձանագրվում է դիտարկման ձևերում՝ միաժամանակ կատարելով համապատասխան գրառումներ գնի նկատելի փոփոխության դեպքում: Հետագայում գին դիտարկող վիճակագիրը կատարում է տվյալների համակարգչային մուտքագրում՝ ըստ առկա համակարգչային ծրագրերի, իրականացնելով միևնույն ժամանակ մուտքագրված գնային տվյալների տրամաբանական և մաթեմատիկական ստուգումներ:

Գնի (սակագնի) արձանագրումն իրականացվում է հետևյալ մեթոդներով.

- ✓ առևտրի (ծառայության) կետ անմիջական այցելությամբ,
- ✓ հեռախոսային զանգերի միջոցով,
- ✓ համացանցի միջոցով,
- ✓ գների կենտրոնացված արձանագրմամբ (հավաքագրմամբ):

IV. ՍԳԻ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ՍԳԻ-ի դասակարգման համար, որպես միջազգայնորեն ընդունված դասակարգիչ, կիրառվում է Անհատական Սպառման Ըստ Նպատակների (ԱՍԸՆ) դասակարգիչը, ինչը հանդիսանում է 2008 թվականի Ազգային Հաշիվների համակարգում չորս հիմնական դասակարգիչներից մեկը:

ԱՍԸՆ դասակարգիչը կազմավորված է երկու խոշոր խմբավորումից, որոնք են՝

- Սպառողական ապրանքներ
- Սպառողական ծառայություններ

Սպառողական ապրանքներ–ապրանքներ (Ա), որոնք ձեռք են բերվում բնակչության կողմից անմիջական սպառման համար: Սպառողական ապրանքները ըստ օգտագործման տևողության տարանջատվում են *երկարատև (Ե)* (կահույք, հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա և այլն), *միջին տևողության (Մ)* (հագուստ, կոշիկ, սպասք և այլն) և *կարճատև (Կ)* (սննդամթերք, ավոհողային խմիչք, ծխախոտ, օձանելք, գեղահարդարման ապրանքներ և այլն):

Կարճատև և երկարատև օգտագործման ապրանքների միջև տարբերությունը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ ապրանքները կարող են օգտագործվել մեկ կամ բազմակի անգամ՝ զգալիորեն գերազանցելով մեկ տարին: Երկարատև օգտագործման ապրանքները ունեն հարաբերական բարձր արժեք: Միջին տևողության օգտագործման ապրանքները երկարատև օգտագործման ապրանքներից տարբերվում են նրանով, որ չնայած դրանց օգտագործման ժամկետը գերազանցում է մեկ տարին, սակայն

իրականում այն ավելի կարճատև է, իսկ դրանց արժեքը՝ զգալի ցածր երկարատև օգտագործման ապրանքներից:

Սպառողական ծառայությունները – *ծառայություններ (Օ)*, որոնք բավարարում են բնակչության անձնական պահանջմունքները, սակայն չեն վերաճվում ապրանքի:

V. Տվյալների հավաքագրման ժամանակացույցը

Տնտեսության պատկերը ճիշտ նկարագրելու և գնային փոփոխությունները ճիշտ արտացոլելու համար կարևորվում է գնային տեղեկատվության հավաքագրման *ժամանակացույցի* որոշումը:

Գնային տեղեկատվության հավաքագրման համար անհրաժեշտ է կազմել հստակ ժամանակացույց, որը ճշգրիտ կարտացոլի գների մակարդակը և դրանց փոփոխությունների դինամիկան: Նշված խնդրի լուծման համար շատ է կարևորվում դիտարկման պարբերականության կամ դիտարկման ժամանակային միջակայքերի ընտրությունն, ինչպես նաև դիտարկման պայմանների որոշումը: Գների դիտարկման և արձանագրման համար արդյունավետ միջակայք համարվում է ամսական պարբերականությունը:

ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկման համար գները դիտարկվում են ամսական պարբերականությամբ, առևտրի և ծառայության կետեր 3 անգամյա այցելության միջոցով, հստակ պահպանելով այցելությունների 10-օրյա միջակայքը (յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին):

Պայմանավորված նախորդ հատվածում սույն կարգում նկարագրված ապրանքների և ծառայությունների յուրահատկություններով, տարբերվում է ապրանքների և ծառայությունների տեսակների գների դիտարկման պարբերականությունը, քանզի ինդեքսների հաշվարկման համար կարևորվում է գների արձանագրման այն ժամանակահատվածը, որի ընթացքում ապրանքատեսակի որակի փոփոխություն չի եղել, իսկ գների ինդեքսները ճիշտ են արտացոլում սպառողական

շուկայում առկա ապրանքների (ծառայությունների) գուտ գների (սակագների) փոփոխությունները:

Միևնույն ժամանակ գների դիտարկման հաճախականությունը որոշելու համար կարևորվում է նաև գների կայունության գործոնը որոշակի ժամանակահատվածում, ինչը հիմնավորվում է գների դինամիկ պատմական շարքերի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Հիմնվելով վերը նշված գործոնների վրա, ինչպես նաև հաշվի առնելով ապառողական շուկայի որոշակի կայուն վիճակը, ՀՀ ապառողական շուկայում գների (սակագների) դիտարկման համար ընտրվել է հետևյալ մեթոդը¹.

• Գնադիտարկման համար սահմանված են ամսական 3 անգամյա դիտարկումներ՝ յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին:

Կարճատև, երկարատև և միջին տևողության օգտագործման ապրանքների և ծառայությունների գների (սակագների) դիտարկումներն իրականացվում են հատուկ մշակված կարգով: Երեք անգամյա դիտարկումների իրականացման համար բազային օբյեկտները խմբավորված են 3 պայմանական խմբերի՝ համեմատաբար բարձր, միջին և ցածր գնային մակարդակ ունեցող կազմակերպությունների, հաշվի առնելով դրանցում գործող գների մակարդակը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակը և առևտրի սպասարկման պայմանները: Երեք դիտարկումների համար բազային օբյեկտները խմբավորված են հավասարաչափ, ընդգրկելով իրենց կազմում բոլոր երեք՝ վերը նշված պայմանական խմբերի օբյեկտների տեսակները հնարավորինս հավասարաբար: Ընդհանուր առմամբ, իրականացնելով ամսական երեքանգամյա դիտարկումներ, յուրաքանչյուր բազային օբյեկտ գնադիտարկողը տվյալ ամսվա ընթացքում այցելում է մեկ անգամ: Երկու այցելությունների միջև ընկած ժամանակահատվածը յուրաքանչյուր բազային օբյեկտի համար կազմում է մեկ ամիս: Դիտարկումների ժամանակ վերը նշված բազային օբյեկտների յուրաքանչյուր խմբավորումը ապահովում է ՍԳԻ-ի ապրանքների և ծառայությունների ամբողջական

¹ Գների դիտարկման համար ընտրված տարբերակը առաջարկվել է Եվրոպական ԹՎԻՆԻՆԳ ծրագրի մասնագետների կողմից:

հավաքակազմի գնային տեղեկատվության հավաքագրումը:

• Թարմ միրգ, բանջարեղեն, վառելիք (բենզին, դիզելային վառելիք) ապրանքախմբերում ընդգրկված ապրանք-ներկայացուցիչների գծով, դիտարկումներն իրականացվում են ամսական 3 անգամյա պարբերականությամբ՝ 1-ին, 10-ին և 20-ին կամ դրանց մոտակա օրերին՝ յուրաքանչյուր դիտարկման ժամանակ այցելելով դրանց դիտարկման համար ընտրված բոլոր դիտարկման օբյեկտները:

Յուրաքանչյուր տարվա համար նախօրոք կազմվում է գնադիտարկումների հստակ ժամանակացույց:

VI. Որոշ ապրանքների (ծառայության) տեսակների գների (սակագների) դիտարկման առանձնահատկությունները

ՄԳԻ-ի կազմում ընդգրկված ապրանքների և ծառայության որոշ տեսակների համար գոյություն ունեն գների դիտարկման մի շարք առանձնահատկություններ:

Միրգ, բանջարեղեն ապրանքախմբի թարմ տեսակների գնադիտարկման համար ընտրվում են առավել ներկայացուցչական, բնակչության լայն շերտերին մատչելի, ինչպես նաև, գնադիտարկման համար ընտրված տվյալ առևտրի կետերում դրանց ընդհանուր սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակները:

Թարմ տեսակի մրգի և բանջարեղենի գների դիտարկումներն իրականացվում են նաև գյուղատնտեսական շուկաներում: Գների արձանագրումն իրականացվում է դիտարկման ժամանակացույցին համապատասխան, գյուղմթերքի առևտրի առավել ակտիվ ժամանակահատվածում, երբ կատարվում է գյուղմթերքի հիմնական սպառումը (առավոտյան ժամերին, բայց ոչ ուշ քան ժամը 16.00): Գին դիտարկող մասնագետը գների մասին տեղեկատվությունը հավաքագրում է գյուղատնտեսական շուկաներում ընտրելով մի քանի վաճառակետեր շուկայի տարբեր հատվածներից՝ դրանք անփոփոխ պահելով գների դիտարկման համար երկարատև ժամանակահատվածում:

Շուկաներում վաղահաս տեսակի բերքի ի հայտ գալու պահից սկսած գին դիտարկող մասնագետը գնադիտարկման պահին իրականացնում է ուշահաս և

վաղահաս բերքի առկա վաճառակետերի քանակությունների լրացուցիչ հաշվարկ, ինչը հիմք է հանդիսանալու յուրաքանչյուր գյուղմթերքի միջին կշռված գնի ձևավորման համար:

Գյուղմթերքի ընտրված տեսականու համար կազմվում է մոտավոր տեխնիկական բնութագիր, որը ներառում է նաև տեղեկություններ ապրանքային տեսքի, մթերքի չափսի, տեսակի, անվանման, որակական հատկանիշների և այլնի մասին:

Սեզոնայնությամբ պայմանավորված միրգ, բանջարեղեն ապրանքախմբի գների դիտարկման մոտավոր ժամանակացույցը, որը ձևավորվել է հաշվի առնելով նախորդ տարիների փորձը՝ բնակլիմայական պայմանները (չբացառելով ընթացիկ տարվա յուրահատկությունները), բերված է «Մեթոդաբանական ցուցումներ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման» ձեռնարկում (հավելված 1՝ Սեզոնային ապրանքների գները):

Հավկիթների համար արձանագրում են սեղանի տեսակի առաջին կարգի թարմ կամ սառնարանային այն հավկիթների գները, որոնց քաշը տատանվում է 45-ից 48 գրամի սահմաններում: Ավելի փոքր չափս ունեցող հավկիթների գները չեն դիտարկվում:

Առողջարանների և հանգստյան տների ծառայությունների սակագները (ուղեգրի արժեքը) ներառում են նաև ամանօրյա տոնական փաթեթների սակագները, որոնք արձանագրվում են դրանց վաճառքի ամսում՝ նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, սակայն ընդգրկվում են ՍԳԻ-ի հաշվարկներում փաստացի սպառման ժամանակ՝ հունվարի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում: Մինևույն ժամանակ դրանք չպետք է ներառեն ծառայության ընդհանուր արժեքում, օրինակ տոնական սեղանի, կազմակերպված համերգների և այլ լրացուցիչ միջոցառումների սակագները:

Օդային ուղևորափոխադրումների տոմսերի արժեքները դիտարկվում և արձանագրվում են համապատասխան դիտարկման աղյուսակներում դրանց սպառման (թռիչքի) օրվանից մոտ 2 ամիս առաջ: Արձանագրված տոմսերի արժեքները ներառվում են ինդեքսների հաշվարկներում դրանց սպառման, այլ ոչ գնման ամսին:

Արձանագրվում են երկկողմանի թռիչքի տոմսերի արժեքները, ներառելով բոլոր տեսակի հարկերը և վճարումները: Դիտարկումն իրականացվում է բնակչության

շրջանում լայն սպառում ունեցող տոմսերի տեսակների (էկոնոմ դասի) գների մասով:

Որոշ ապրանքների և ծառայությունների գների (սակագների) դիտարկումը, բացի գնադիտարկման համար ընտրված բնակավայրերից, կարող է նաև իրականացվել մարզի մեկ այլ բնակավայրում, առկա է ՍԳԻ-ի ցանկում ընդգրկված և գների դիտարկման համար անհրաժեշտ ապրանք (ծառայության) ներկայացուցիչը, եթե դիտարկման համար ընտրված քաղաքում չկա, կամ բավարար քանակությամբ չկա տվյալ ապրանք (ծառայության) տեսակը:

VII. Գների դիտարկման համար ապրանքատեսակների ընտրությունը

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար մայրաքաղաք Երևանում և հանրապետության 11 քաղաքներում, ըստ սահմանված մեթոդաբանության կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկումներ:

Ըստ մարզերի, գների դիտարկումը կատարվում է հետևյալ բնակավայրերում.

Մարզի անվանումը	Դիտարկվող բնակավայրը
Արագածոտն	Աշտարակ
Արմավիր	Վաղարշապատ
Արարատ	Արտաշատ
Գեղարքունիք	Գավառ
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Իջևան

Գների դիտարկման համար ապրանքատեսակների ընտրությունն իրականացվում է՝

- ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ինտեգրացված հետազոտության ծախսումների մասին տվյալների,
- հաշվի առնելով ապրանքախմբերի տեսակարար կշիռները,
- գին դիտարկող մասնագետների կողմից,
- փորձագիտական գնահատականներով:

Գին դիտարկող վիճակագիրը տվյալ ապրանքի (ծառայության) համար ընտրում է առավել ներկայացուցչական ապրանքի (ծառայության) տարատեսակ, խորհրդակցելով առևտրի, ծառայության կետի վաճառքի մասնագետների հետ:

Պարբերաբար ներկայացնում է առաջարկություններ (եռամսյակային կտրվածքով) ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին: Ներկայացված առաջարկները բոլոր դիտարկվող բնակավայրերից հավաքագրելուց հետո ենթարկվում են վերլուծության և իրականացվում է նոր ընտրանք կամ ընտրանքի թարմացում:

Գների արձանագրումն իրականացվում է բազային կազմակերպություններում ընտրված ներկայացուցիչների գծով: Ամեն ապրանքի (ծառայության) համար ընտրվում է 2-ից 3 ներկայացուցիչ հստակ նկարագրով: Արձանագրված գներն էլեկտրոնային աղյուսակ մուտքագրվում են տվյալ ներկայացուցչի նախորդ դիտարկման ժամանակ արձանագրված և մուտքագրված գնի համապատասխան ցուցանիշի տողում, որոնցով և հաշվարկվում է հաշվետու ամսվա գնի հարաբերական գործակիցը ներկայացուցչի համար: Տվյալ ապրանքի կամ ծառայության ներկայացուցիչների բոլոր հարաբերական գործակիցների միջին երկրաչափական մեծությունը հանդիսանում է որպես էլեմենտար՝ ստորին մակարդակի ինդեքս, որը համապատասխան տեսակարար կշռով մասնակցում է ինդեքսների ագրեգացման հաշվարկներին:

Ընտրված ապրանքատեսակների ցանկը՝ դրանց համառոտ տեխնիկական բնութագրով, տրվում է գին դիտարկող մասնագետներին: Համաձայն այդ տեխնիկական բնութագրերի գին դիտարկող մասնագետը ընտրում է տվյալ մարզի համար առավելապես ներկայացչական ապրանքատեսակ և դրա մանրամասն տեխնիկական բնութագիրը (ապրանքատեսակն արտադրող երկրի, արտադրող կազմակերպության, փաթեթավոր-

ման տեսակի, որակական հատկանիշների, քաշի և այլնի մասին տեղեկատվություն) ներկայացնում է ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին:

Նույն ապրանքի (ծառայության) համար դիտարկվող տարբեր բնակավայրերում կարող է ընտրվել տարբեր տեսականի, որն ընդհանուր առմամբ պետք է համապատասխանի ՀՀ ԱՎԾ-ի կողմից նախանշված տեխնիկական բնութագրերին և ապահովի ապրանքների տեսականու բազմազանությունը ՀՀ սպառողական շուկայում:

Ապրանքատեսակի (ծառայության տեսակի) բացակայության պայմաններում գործում է բացակայող ապրանքատեսակի «Պայմանական գնի հաշվարկի մեթոդը», ինչի նկարագրությունը զետեղված է ՍԳԻ-ի հաշվարկման համար կիրառվող մեթոդաբանության համապատասխան պարբերությունում:

ՍԳԻ-ն հանդիսանում է զուտ գնային փոփոխության ինդեքս, բացառելով որակական փոփոխության հաշվին տեղ գտած գների փոփոխությունը, ինչով և պայմանավորված, գին դիտարկող մասնագետը դիտարկվող ապրանքի (ծառայության) տեսակը մեկ ուրիշ նմանատիպ ապրանքատեսակով չի կարող ինքնանպատակ փոխարինել, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում նախորդ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին:

VIII. Ապրանքի (ծառայության) միջին գների (սակագների) հաշվարկը

ՍԳԻ-ի հավաքակազմում ընդգրկված ապրանքի (ծառայության) միջին գների (սակագների) հաշվարկը կատարվում է համակարգչային ծրագրի միջոցով, բոլոր բազային առևտրի (ծառայության) կետերից հավաքագրված, ապրանքների և ծառայությունների ներկայացուցիչների գների միջին երկրաչափական մեծության բանաձևով՝

$$P_{1(n)} = \sqrt[n]{P_{1(1)} \cdot X \cdot P_{1(2)} \cdot X \cdot P_{1(3)} \cdot X \dots X \cdot P_{1(n)}},$$

որտեղ

$P_{1(n)}$ ՝ ապրանքի կամ ծառայության միջին երկրաչափական գինն է,

ո՛ տվյալ ապրանքի կամ ծառայության արձանագրված գների քանակն է հաշվետու ժամանակաշրջանում:

Մուտքագրված և ստուգված գների մասին տվյալներն էլեկտրոնային կապի միջոցով տասնօրյա պարբերականությամբ սահմանված ժամկետներում ներկայացվում են ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգայի համադրումների բաժին:

Ամսական ՍԳԻ-ի հաշվարկման համար գնային տեղեկատվության ներկայացման վերջնաժամկետը հանդիսանում է հաշվետու ամսվա 25-ը:

Ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնց գները(սակագները) դիտարկվում են կենտրոնացված՝ ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից

ՀՀ	Ապրանք - ծառայությունների անվանում
1	Խմելու ջրի մատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայության մատուցում
2	Ծառայություններ բնակչությանը էլեկտրաէներգիայի վաճառքի
3	Ծառայություններ խողովակաշարերով բնակչությանը գազային վառելիքի վաճառքի
4	Ծառայություններ սանմաքրման
5	Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցում
6	Ծառայություններ վարորդական դպրոցների՝ ավտոմեքենա վարելու իրավունք ստանալու գործնական դասընթացի վճար
7	Հիմնական հեռախոսագծի բաժանորդային վարձ
8	1 րոպե տեղական խոսակցության սակագին
9	Հեռախոսային խոսակցություն (հանրապետության ներսում)
10	Հեռախոսային խոսակցություն (հանրապետությունից դուրս)
11	Բջջային հեռախոսի պայմանագրային վարձավճար
12	Բջջային հեռախոսի պայմանագրային թույլտվություն
13	Բջջային հեռախոսի կանխավճարային քարտի արժեք
14	Բջջային հեռախոսի կանխավճարային թույլտվություն
15	Ծառայություններ ինտերնետային հասանելիության
16	Ծառայություններ բարձրագույն կրթության՝ բակալավրիատի ուսման վարձ
17	Ծառայություններ նոտարական
18	Ծառայություններ բանկային
20	Ծառայություններ ավտոմեքենաների ապահովագրության

**ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների
բաժնի ՍԳԻ-ի կազմման համար պատասխանատու մասնագետների
գործառույթները**

- ❖ ՍԳԻ-ի կազմման և հաշվարկման համար մեթոդաբանության մշակում և անհրաժեշտության դեպքում դրա պարբերաբար վերանայում և կատարելագործում:
- ❖ ՀՀ ՍԳԻ-ի զամբյուղի կազմի ու կառուցվածքի ընտրանք և դրա պարբերաբար արդիականացում:
- ❖ Զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների միասնական ընդհանրացված տեխնիկական բնութագրերի պատրաստում:
- ❖ Դիտարկվող առևտրի (ծառայության) օբյեկտների ընտրանք դիտարկվող քաղաքներում: Համապատասխան բաշխվածության ապահովում ըստ քաղաքի տարածքի, առևտրի (ծառայության) օբյեկտների խոշորության, գործնություն իրականացնելու պայմանների և տեսակների:
- ❖ Նոր ապրանքի (ծառայության) ընտրանք և ընդգրկում դիտարկման ցանկում:
- ❖ Դիտարկման համար հարցաթերթերի կազմում և վերանայում:
- ❖ Գին դիտարկող մասնագետների վերապատրաստում, սեմինարի կազմակերպում, դիտարկման համար համապատասխան գիտելիքների և հմտությունների ուսուցանում, աշխատանքային գործընթացի ժամանակ ծագող բոլոր տեսակի մեթոդաբանական հարցերի պարզաբանում. Գնադիտարկող վիճակագիրների աշխատանքի վերահսկում:
- ❖ Տվյալների մուտքագրման համար անհրաժեշտ աշխատանքային էլեկտրոնային աղյուսակների կազմում:
- ❖ Տնային տնտեսությունների կողմից կատարված սպառման ծավալների հիման վրա ՍԳԻ-ի զամբյուղում ընդգրկված ապրանք-ծառայությունների, ինչպես նաև դիտարկվող բնակավայրերի համապատասխան կշիռների կառուցում:
- ❖ Տարբեր մեթոդներով որակական ճշգրտումների իրականացում, ինչպես նաև սեզոնային կամ ժամանակավորապես բացակայող ապրանքների գների հաշվարկ:
- ❖ Մարզերից ստացված միջին ամսական գնային տվյալների վերլուծություն և ՍԳԻ-ի հաշվարկների իրականացում բոլոր անհրաժեշտ կտրվածքներով և տարբեր ժամանակահատվածների համեմատ:

Գին դիտարկող մասնագետների գործառույթները

- ❖ Իրականացնել գների դիտարկումներ առևտրի և ծառայության նախապես ընտրված և սահմանված օբյեկտներում ըստ սահմանված կարգի և ժամանակացույցի՝ ամիսը 3 անգամ՝ 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին (յուրաքանչյուր տարվա համար սահմանված է գնադիտարկման ժամանակացույց):
- ❖ ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին եռամսյակային պարբերականությամբ ներկայացնել համապատասխան առաջարկներ դիտարկման համար անհրաժեշտ առևտրի և ծառայության օբյեկտների ընտրանքի կամ փոփոխության համար:
- ❖ ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին տեղեկացնել դիտարկման համար ընտրված օբյեկտի վերակազմավորման կամ լուծարման մասին:
- ❖ Միաժամանակ ներկայացնել համապատասխան առաջարկ լուծարված օբյեկտը նմանատիպ առևտրային պայմաններով նոր օբյեկտով փոխարինելու մասին:
- ❖ Պարբերաբար իրականացնել ապրանք (ծառայություն) ներկայացուցիչների վերանայում և արդիականացում, ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին ներկայացնելով համապատասխան առաջարկներ նոր ապրանքատեսակի ընդգրկման համար՝ նշելով տեխնիկական բնութագրերը:
- ❖ Տասնօրյա պարբերականությամբ իրականացնել դիտարկված գների մուտքագրումը համապատասխան էլեկտրոնային աղյուսակներում, կատարելով գնային տվյալների համապատասխանության, ճշգրտության, տրամաբանական և թվաբանական ստուգում:
- ❖ Մուտքագրված գնային կամ այլ ցուցանիշներով էլեկտրոնային աղյուսակները մոդեմային կապի միջոցով ներկայացնել ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի:
 - ❖ Օպերատիվ կարգով արձագանքել ՀՀ ԱՎԾ վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի աշխատակցի հարցադրմանը, անհրաժեշտության դեպքում իրականացնել լրացուցիչ (ստուգիչ) գնադիտարկում: